ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2017 թվականի նոյեմբերի 27-30-ը
ք.Մոսկվա /Ռուսաստանի Դաշնություն/
գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանուն՝

Նաիրա Կարապետյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի վարչության պետ:

3. Գործուղման վայրը և ժամկետը՝

ք. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2017 թվականի նոյեմբերի 27-30-ը, Եվրասիական տնտեսական հանձնաժողով:

4. Հրավիրող կողմը՝

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախաձեռնությամբ:

5. Գործուղման նպատակ

Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների երկրորդ փուլին մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների երկրորդ փուլի ընթացքում քննարկվել են վերոհիշյալ Համաձայնագրի նախագծի առանձին բաժիններ, մասնավորապես՝ ընդհանուր իրավական դրույթներ, մաքսային համագործակցություն և ընթացակարգերի դյուրացում, ներքին շուկայի պաշտպանություն, տեխնիկական կանոնակարգեր, սանիտարական, անասնաբուժական և ֆիտոսանիտարական միջոցներ, մրցակցություն, մտավոր սեփականության իրավունք, պետական գնումներ, էլեկտրոնային առևտուր: Բանակցությունների շրջանակներում քննարկվել է նաև

վերոհիշյալ համաձայնագրին կից՝ ծառայությունների և ներդրումների մասին արձանագրության նախնական տեքստը:

Համաձայնագրի նախագծի նախնական տարբերակը՝ ըստ բաժինների, քննարկումների արդյունքում համաձայնեցված էր Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների համապատասխան փորձագետների միջև կայացած խորհրդակցությունների ժամանակ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Համաձայնագրի շուրջ քննարկումներին մասնակցել են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների, ինչպես նաև Սինգապուրի Հանրապետության առանձին ոլորտների մասով փորձագետներ:

Ոլորտային քննարկումների ժամանակ ներկայացվել են կողմերի հիմնական տարաձայնությունները՝ Համաձայնագրի նախագծի առանձին բաժինների վերաբերյալ և արդյունքում որոշ հարցերի ուղղությամբ կողմերի միջև ձեռք է բերվել որոշակի համաձայնություններ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Բանակցությունների արդյունքում նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց առ այն, որ նշված Համաձայնագրի շուրջ կայանալիք հերթական երրորդ փուլը կանցկացվի 2018 թվականի փետրվարի 27-ից մինչև մարտի 1-ը Սինգապուրում:

Կողմերի միջև ստորագրվեց Եվրասիական տնտեսական միության ու անդամ պետությունների և Սինգապուրի Հանրապետության միջև ազատ առևտրի մասին Համաձայնագրի կնքման շուրջ բանակցությունների երկրորդ փուլի արդյունքներով կազմված Արձանագրություն:

9. Գործուղվող՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի վարչության պետ Նաիրա Կարապետյան:

10. Ստորագրություն, ամսաթիվ

04.12.2017 թ.